

փշրանքները կմնային, որով դարերը սնունդ ստանալ կարող են: Բոլոր զօրեղ հոգիները իրենց ժամանակն ունին, բայց նա կենդանի է իւր ժամանակից դուրս: Նա մասնա կից է Աստուծոյ յաւիտենականութեան, որովհետեւ նորա ներգործութիւնը չի պակասում: Այսօր ևս ամէն տեղ նա իւր ծանօթ և անծանօթ աշակերտներն ու աշակերտուհիներն ունի, որոնք դաւանում են նրան ասելով. Մենք թափառում ենք անապատի մէջ, իսկ դու մեր մանանան ես, դու երկնքից իջած հացն ես:

Գ. Վ. Յովսէփեան



## ԴԱՐՁԵԱԼ ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(Համ. «Արարատ» 1907 Նոյեմբեր և Դեկ.)

Գիւղական քահանաների նիւթական դրութեան մասին ամեն ինչ ասած չենք լինի, մինչև չպարզենք այն պատճառները, որոնք ստեղծել են նիւթական վարձատրութեան այդպիսի վնասակար ձև:

Առհասարակ երբ արտաքին միջամտութիւն չկայ, երբ մի կողմնակի ուժ չի ազդում իրերի բնական ընթացքի վերայ, ազդեցութիւնը և դիմադրութիւնը, աշխատանքը և վարձատրութիւնը ձգտում են հաւասարակշռուել: Ինչպէս ամեն տեղ, ամեն հանգամանքի մէջ, այնպէս էլ այս բնական օրէնքի հիման վերայ գիւղական քահանաների վարձատրութիւնը նոյն չափը և կերպարանքը ունի՝ ինչ չափ և կերպարանք ունի գիւղական քահանայի արած ծառայութիւնը ժողովրդին: Եւ ճշմարիտ, եթէ խոր սումնասիրելու լինենք թէ ինչպէս է հասկացւում քահանայական պաշտօնը կամ առաւել ճիշտ արտայայտած ծառայութիւնը գիւղում, կը տեսնենք որ եթէ նրանց ստացած վարձատրութիւնը անորոշ է, ինչպէս շեշտել էինք այդ մասին խօսելիս, դորա համապատասխան պատահական է և քահանայի ծառայութիւնը. եթէ վարձատրութիւնը կասկածելի է, դորա համապատասխան ծառայութիւնն էլ շատ անգամ ոչ անհրաժեշտ. և եթէ վարձատրութիւնը կամայական է,

կամայական է նոյն շափով և նրա ծառայութիւնը:

Պէտք է նկատել առհասարակ, որ դիւղացին քահանայի կարիք զգում է միայն այն ժամանակ, երբ որ և է մի օրինակատարութեան համար քահանան հարկաւոր է: Այդպէս և պատկառանք զգում է դիւղացին դէպի քահանան, երբ նա՝ քահանան՝ պաշտօնական — եկեղեցական զգեստ ունի և մաշտոցը ձեռքին է, օրէնք է կատարում: Իսկ մնացած ժամանակ քահանան նրան պէտք չէ և միայն երկար շորերն են յիշեցնում, թէ նա քահանայ է: Քահանան դիւղացու համար եկեղեցական խորհուրդներ կատարող, ժամ ասող, և հանդիսաւոր օրերը նրա հացն օրհնող է, ուրիշ ոչինչ: Եւ օրինակատարութիւններէ համար քահանային հրաւիրելու ստիպողը ոչ թէ ներքին հոգեկան կարիքն է, այլ միայն հնաւանդ ուղիորդութեան ուժը: Այսպէս քահանայի դօրծը դիւղում հասկացւում է ոչ թէ իբրեւ յարատե միշտ բովանդակալից մի պաշտօն, այլ պատահական մի ծառայութիւն:

Այս ամենը պարզելու համար նկատենք այն բոլոր դէպքերը, որոնց մէջ արտայաւում է քահանայի ծառայութիւնը: Սկսենք ժամ ասելուց:

Հաւանական է, որ լուծ կլինէք, թէ ինչպէս դիւղական քահանան առաւօտեան ժամերգութիւնը սկսում է դռնից, առելով դնում մինչև եկեղեցի և մնացածը այնտեղ շարունակում: այդ կատակ չէ, այլ իրողութիւն. իսկ դիւղացիք կատակ են դարձրել շափազանցելով, թէ տէրաէրը ժամը ճանապարհին է ասում, այնպէս որ ժամ մտնելն ու դուրս գալը մէկ է լինում: Ժամակարգութիւնը իւր բովանդակութիւնը կորցրել է եւ քահանաների եւ ժողովրդի համար այն պատճառով, որ միևնոյնը կրկնուել է անյայտ ժամանակներէց և այսօր էլ կրկնւում է ամեն օր: միևնոյնը կրկնելով ընականականապէս նոյնացել է բովանդակութիւնը, ամբացել է ձեռք, արտաքին դասաւորութիւնը: Ես ակամատես եմ եղել, թէ ինչպէս քահանան երեսը գեպի արևելք դարձրած ասում է առաւօտեան աղօթքը, սպասելով ժամհարին: Մենակ է նա, մրմնջում է աղօթքի խօսքերը և իւր տեղում մեքենայաբար արտասանում. «Խաղաղութեան ամենեցուն, Աստուծոյ երկրպագեսցուք» և գլխով երկրպագութեան նշան անում: Ոչ մի կերպ նրան համոզել չի կարելի, թէ քո յետեւը խաղաղութիւնը վրդովող ժողովուրդ չկայ: հապա այս «Խաղաղութիւնը» ումն է՝ վերաբերում, կամ «Աստուծոյ երկրպագեսցուք»: Գրուած է, ուրեմն այնպէս է հարկաւոր, այդպէս էլ պիտի ասուի, դատում է քահանան և շարունակում: Նրա աղօթքի մէջ ամենակն զանազանութիւն չի լինում, երբ

կրօք եկեղեցին լիքն է աղօթող գիւղացիներով: Ապացոյց որ թէ քահանայն և թէ գիւղացիներն համար էական է աղօթքների արտաքինը, այսինքն նրանց արտաքինութիւնը և ոչ թէ նրանց ներքին իմաստը. քահանան թէ կուղ աղօթքն անհնարին տեղում, պատահում է, թողնում է և որևէ միջանկեալ նկատողութիւն անում, կամ մի կարճ նորութիւն հաղորդում, կամ զարմանք արտայայտում մի առարկայի մասին և դարձեալ շարունակում աղօթքը: Պատահում է, որ միջանկեալ խօսքը նրա յիշողութիւնից թռչնում է անգիր արտասանող աղօթքի շարունակութիւնը, շղիւում է քահանան, անկապ կտորներ կպցնում զանազան աղօթքներից, բոլորովին շփոթում, գոյրոյթի մի բացականչութիւն է անում իր լեզուի կամ մտքի անհնազանդութեան համար և երբ շփոթութենից դուրս գալու հնար չի գտնում, կամ նորից է սկսում, կամ հենց այնտեղ էլ վերջացնում է՝ կցելով աղօթքների սովորական վերջաւորութիւնը: Պատահում է մի քահանայ «Աւուր պատշաճի» աղօթքը սխալմամբ թողնում է, որիչն է ասում. իսկոյն աջից և ձախից միւս քահանաները և հմուտ տիրացուները ուղղում են նրան, առաւել վստահեցրած ասենում են և հարկաւոր տեղը բայց անում և մատով ցոյց տալիս սխալւողին: Կամ կը լինէր ժողովրդի մէջ պատուող խօսքը. «Թող լինի Ղուկասու»: Ժամերգութիւնը ընդհատել թէ՛ կուղ մի հինգ վայրկեան, տարօրինակ երևոյթ է. իսկոյն ամեն կողմից օգնութեան են հասնում: Ասմունքները պէտք է մի անընդհատ շարունակութիւն կազմեն: Այս էլ ի հարկէ արտաքին ձևի պահանջի հետևանքն է: Աղօթելը այդպէս է հասկանում քահանան. նա անձնական աղօթք չունի: Արտասանեց առաւօտեան, ճաշուայ և եկեղեցեան ժամերգութիւնը առանց նոյն իսկ մի հատ վկայի, նրա հոգին հանդիստ է. պարտականութիւնը կատարած: Այսպէս ուրեմն ժամասացութիւնը գիւղական քահանայի համար պարտականութիւն է. և որովհետև պարտականութիւն է, պէտք է մի կերպ ասել, վերջացնել: Այս հանգամանքի հետևանքն է այն շտապողականութիւնը, որ երևում է ժամերգութեան ժամանակ. քարոզները, երգերից մի քանիսը այնքան արագ են արտասանւում, որ անսովոր մարդը չի կարող հետևել: Քահանան քարոզների վերջին կցած «դէր աղաչեսցուք, կամ «ի տեառնէ խնդրեսցուք» մաղթանքներից մի երկուսը դուռ չլսած, կարկտի նման վրայ է տալիս համապատասխան «Տէր ողորմեաները» և սկսում աղօթքը: Ինչ վերաբերում է շարահաններին, այստեղ ևս ձևական կողմն է, որ նշանակութիւն ունի: Զգտում շարականի իմաստով նոր բան յայտնել կամ

համապատասխան գգայնությունը զարթեցնել լսողների մէջ, ամենեւին չի երևում: Էական է շարականի եղանակը, որ բարձր ձայնով երգուի: Քիչ չէ պատահում, որ դասերը մի տեսակ բառ են մտնում և երգողները աշխատում են միմեանց կարելւ երբեմն նոյն իսկ խօսքերը մէկ են անում, մի տիրացուի ձայնակոխ անեն: Եւ ժողովուրդը եկեղեցուց հեռանալիս իւր քննադատութիւնը սահմանափակում է սորանով. «շարականի եղանակը քաղցր էր. այս ինչ տիրացուի ձայնը զիւ է, այս ինչին լուհուի տուին զօշաղները»:

Գիրքը կարգաւիս նոյն երեւոյթն է: Էական է արտաքին ձևը, պարբերութիւնների վերջաւորութեանց եղանակը, արագ տրտասանելը ըստ երեւութին անսայթաք: Կետադրութեան ուշադրութիւն, կարգացածի միտքը արտայայտել աշխատել, հասկանալի լինելու ձգտումն... այդպիսի ցանկութիւն ընթերցողի կողմից ոչ միայն պարտաւորեցուցիչ չէ, այլ նոյն իսկ խորթ է: Երբ քահանան փորձում է դիրքը կամ Աւետարանը հասկանալի լեզուով կարգաւ՝ լսողների համար այդ մի անդուրեկան—խորթ նորութիւն է, որովհետեւ այն խորհրդաւորութիւնը, որով պատած է լինում Աւետարանի ընթերցումը (խնկարկութիւն, մոմբի լոյսը, եկեղեցական զգեստը և այլն), չբանում է աշխարհաբար կարգաւիս: Գիւղացու միտքը Աւետարանից սպասում է խորը, անըմբռնելի, մութ մտքեր, որոնց հասկանալը հազարից մի մարդու բան է. իրենց համար այն էլ բաւական է, որ քահանան կարդում է և իրանք լսում են: Լռելեայն այս աղղութիւնն է ընդունում գիւղացու մտածողութիւնը. եթէ կարելի է Աւետարանը հասկանալ, ուրեմն կարելի է և քննել, իսկ եթէ քննուի, կարող է և չընդունուել. իսկ այս վերջինից սպասում է գիւղացին. հենց դորա համար էլ առաջինից խոյս է տալիս: Առհասարակ գիւղացու բմբռնողութեան մէջ եկեղեցական վերաբերեալ ամեն բան այնպէս խիստ կապակցուած է միմեանց հետ, որ մէկին գիպելը վտանգ է սպառնում ամբողջին. անշուշտ արտաքինի, ձևի զօրեղ ազդեցութեան հետեանքն է սա: Դիցուք գիւղական մի սրբութիւն, որ և է «շէկ» կամ «կալմի» Աւետարան, իբրեւ պաշտամունքի առարկայ մէկը քննադատում է և աշխատում է հասկացնել, որ Աւետարանները մէկ են և չի կարող մէկի այս կամ այլ ձևով դրուած լինելը էական տարբերութիւն առաջացնել կամ սորա նման մի բան, գիւղացին իսկոյն այսպիսի ընդհանրացումն կանի. «էսօր, որ էս սուրբը չընդունենք, էդուց էլ կասեն հազորդը ոտւա է, միւսներն էլ թէ Աստուած չկայ»: Ինչ որ պապերից տեսնուած է, ինչ որ լսել են,

ինչպէս որ լսել են, ուղիղը այն է. այնպէս էլ պէտք է լինի: Որովհետեւ ժամատացութեան ներքին բովանդակութիւնը նրանց համար անհատականալի լինելու պատճառով հախան չէ, այդ պատճառով էլ ուժքը, որի առաջ երկիւղածութիւն են դգում, խորհրդաւորութիւնը գիւղացիք գտնում են արտաքին ձևերի ամբողջութեան մէջ. և նրանց համոզմունքով եթէ դիպչում են արտաքին ձևերին, գորանից վտանգւում է խորհրդաւորութիւնը:

Ժամերդութեան գնում են գիւղերում առհասարակ ծերացած տղամարդիկ և կանայք, այդ նրանց համար պարտաւորեցուցիչ և վայել է համարւում. իսկ երիտառարդների համար որոշ ժամանակներ կան եկեղեցի գնալու: Նոյն իսկ համեռտութեան հակառակ մի բան է համարւում, երբ ժամանակից դուրս, եկեղեցի է գնում մի երիտասարդ: «Ամօթ չի, Զահել հարս՝ էս ժամանակ ժամ է գնում. նկատում են գիւղացիք: Ծերերն էլ երբ եկեղեցի են գնում, իրենց համար մի մի արտաքին նշան ունին, երբ բաւական են համարում եկեղեցում հանգնելը: Օր. երբ «հաւատամքը» ընդունեց, կամ «հարցի» զանդը տուին, կամ Աւետարանի գրքակալը դրին, կամ սկիհը ճեքեցին, կամ վարագոյրը քաշեցին, մի խօսքով իւրաքանչիւր իւր նշանին՝ կը տեսնէր թողեց եկեղեցին ու գնաց: Եկեղեցում կանգնած ժամանակն էլ ընդհանրապէս ժամատացութեամբ չեն զբաղւում, կամ առօրեայ խօսակցութիւն է սկսում (մանաւանդ կանանց մէջ) կամ իւրաքանչիւրը իր յարմարացրած աղօթքն է մըմնջում, որ մօտաւորապէս այս ընդհանուր խօսքերովն է սահմանափակւում. «Տէ՛ր, ողորմեա՛, Դու ստեղծել ես, դու չկորցնես, մեղայքեղ, Աստուած»: Միայն երբ լսում է. «խաղաղութիւն ամենեցուն, Աստուծոյ երկրպագեսցուք», բոլորը երկրպագում են և անպատճառ երեք անգամ: Մնացած ժամանակ, երբ ոչ իրենց առանձին աղօթքն են մըմնջում, ոչ խօսում, են և ոչ էլ «Աստուծոյ երկրպագեսցուքն» է լսում, անձնատուր են լինում իրենց մտքերին, կամ դիտում են եկեղեցում անցած դարձածը, թէ ինչպէս շարժուեց քահանան, ինչպէս յետ նայեց տիրացուն, հարեանը հարեանի հետ ինչ է խօսում, կամ մամերից մէկը ինչպէս է այրւում, կամ դրսում եղանակը ինչպէս է, մի խօսքով որեւէ արտաքին երևոյթ գրաւում է նրանց միտքը և հայեացքը:

Քացի մեծ պասից, որ գիւղերի համար կարելի է եկեղեցի գնալու ժամանակամիջոց (սեզոն) համարել, սովորութիւն կայ նաև ննջեցեալների համար եղած պատարագներին ևս գնալ եկեղեցի: Այդ օրերը, ինչպէս ասում են, մէկը մանում է, մէկը դուրս է գալիս եկեղեցուց, իսկ «Տէր ողորմեայից» յետոյ համա-

ընտ ամենքը (բացի կանանցից) դուրս են գալիս, ցրում եկեղեցու բակում, խօսում, ծիծաղում, բամբասում, տիրացուների կամ քահանայի ձևերը ընդօրինակում, մի խօսքով անձնատուր են լինում գիւղական անգրագիտ կեանքին: Նախ անգամ այնքան են տարւում վէճով, որ նրանց ձայնը արդէլ է լինում ժամերգութեանը:

Եկեղեցական հանդիսաւոր օրերին երբ հաղորդւում է մեծամասնութիւնը (Զօրհնէք, Զատիկ և այլն), կամ իւր պիտի բաժանուի, կամ ուռ պիտի բաժանուի, եկեղեցում եղողները այնպէս սղակորւում են շուտ մասնաւորութեամբ ցանկութեամբ, որ կարգ պահելու ոչ մի հնարաւորութիւն չի լինում նոյն իսկ ուժով: Խօրօշ է մի դէպք: Քահանան ծաղկազարդին առաւօտեան ժամերգութիւնից անմիջապէս յետոյ ցանկանում է մի քանի խօսք ասել նոյն օրը հաղորդուել ցանկացողներին: Դեռ մի երկու նախագատութիւն չարտասանած, եկեղեցու ժամահաւրը սխալմամբ դուրս է բերում եկեղեցու խորանից թարմ ուռի ճիւղտներն խուրձը (ուռը բաժանւում է ժամերգութիւնից յետոյ, որովհետեւ եթէ ժամանակին տրուի, նախ հնար չի լինիլ ժամատացութիւնը շարունակել և երկրորդ՝ օրուայ համար էականը տեսնելուց յետոյ, ոչ ոք չի մնալ եկեղեցում): Համեոտ աղօթաւորները մի քանի վայրկեան իրենց վերայ ուժ դործ դնելուց յետոյ, այլևս չեն կարողանում իրենց ընազդը յաղթել և վրայ են թափում ուռի ճիւղտներին և քահանայի խօսքը բերնին է մնում:

Քահանաները շատ անգամ արտայայտում են իրենց անբուականութիւնը ժողովրդի ծուլութեան մասին, համարում են Աստուածաբաշտութիւնը թուլացած, ժողովրդի սիրտը եկեղեցուց հեռացած, ամեն ինչ ժամանակի վատութեան են վերագրում: Նրբեմն դատապարտում են ժողովրդին դեպի եկեղեցին ունեցած անտարբերութեան համար, մի տեսակ բարոյական ճնշումն են դործ դնում նրանց եկեղեցի տանելու համար, բայց սա լինում է ոտախկանական միջոց, կարծատե է լինում ազդեցութիւնը, և ի հարկէ այսպիսով ժողովրդի մէջ եկեղեցի յաճախելու կարիք չի տեսնուում: Ժամանակի ընթացքում կրկնութիւնը ինչպէս ժողովրդին է ձանձրացրել, ձանձրացնում է նաև քահանային. նա ծուլանում է, անձնատուր է լինում տնային դքաղմունքներին, կամ հենց առանց դորա էլ, եկեղեցու զանգի ձայնը աւելի ու աւելի քիչ է լսւում: Շարաթ երեկոները միշտ ժամատացութիւն է լինում. իսկ յետոյ արդէն միայն տէրունական մեծ տօներին է զանգի ձայն լսւում ամսուայ ընթացքում: Ժողովուրդը ինքն էլ է նկատում. «ամեն օր խոնարհեցո, ապ-

րեցո, լերջն էլ կեցո»: Իրողութիւնն չէ այն համոզմունքը ժողովրդի մասին, թէ նա ժամատէր է. շատ ու շատ պատճառներ կան, որոնք գրաւական են, որ այդ այդպէս լինել չի կարող: Ժողովրդի դէպի ժամասացութիւնն ունեցած յարաբերութեան այս պատկերը աչքի առաջ ունենալով այս միակ հնարաւոր եզրահացութեան կարելի է գալ, որ եկեղեցի գնալը, ժամասացութեան ներկայ լինելը իրօք կարեք է ժողովրդի համար, բայց ոչ բանական կարիք, որտեղ նրա դրական և իմաստալից որևէ հոգեկան պահանջը բաւարարութիւն է ստանում, այլ մի կողմից անյաղթելի սովորորութիւն է, իսկ միւս կողմից մի խորհրդաւոր սպասելիք, որ եկեղեցի գնալը թէ կուզ տարուայ մէջ մի քանի անգամ. թէ կուզ այն ձևով ինչպէս նկարագրուեց լերեւում. անհրաժեշտ է նախ՝ որ դա մեր քրիստոնեայ լինելու մի էական նշանն է և յետոյ, որ հոգու փրկութեան համար կարևոր է, ոչ թէ այն պատճառով, որ նա կարող է մեր հոգու մէջ փոփոխութիւն մտցնել, նոր արամադրութիւն ստեղծել, համոզել մեզ մեր սխալներին մէջ, մեզ ձգտելու նպատակ ցոյց տալ, այլ հենց ինքը գնալը, եկեղեցի մտնելը քահանայի կարգացածը լսելը, թէ կուզ առանց հասկանալու, մոմ վառելը, խունկ ծխելը, մի երկու ծունր դնելը, երեսին խաչակնքելը, կամ եկեղեցու դուռը թէ կուզ դռնից համբուրելը, հոգու համար շահ է, օգուտ է: Եւ երբ ձգտում էք նրա այդ արտաքին արարքներին մէջ բովանդադակութիւն մտցնել, նրա ուշադրութիւնը դրաւել էականի վերայ կամ քննադատել—նրա վելաբերմունքը—այս օրհասական պատասխանն էք ստանում. «Այոպէս լսել ենք, այոպէս էլ բռնել, ղնում ենք»: Ես անձամբ լսել եմ, ինչպէս մի յայտնի վաճառական փողոցում նոտած գիւղացիներին համոզում էր եկեղեցի գնալ. «Ինչպէս Նոյի ժամանակ ով մտաւ տապանը ազատուեց, այնպէս էլ ով եկեղեցի չգնայ, չի ազատուի»: Բայց այս հասկացողութիւնը ամենևին չէր ազդում նրա կեանքի վերայ: Գիւղական մի յայտնի առակ կայ, որ եկեղեցուն է վերաբերում. «օձը, որ օձ է, ամեն տեղ ուր մուրը է ման դալիս, բայց իր բունը մտնելիս, ուղիղ է մտնում». կնշանակի մարդ որքան էլ վատ լինի, ծանութիւններ ունենայ, անիրաւութիւններ ունի, այն մի քանի բոպէները որ եկեղեցում է լինում, պէտք է մաքուր լինի, Աստուծոյ հետ ուղիղ լինի: Հենց այդպէս էլ վարւում են, լրացնելով առակի շարունակութիւնը. «օձը որ նորից դուրս է գալիս, էլի էն ուր մուրը ման եկող օձն է»: Հենց եկեղեցու գաւթում նրանք իրենց սրելը կերպ են զգում, հենց ժամերգութեան հետեւող միւս բոպէում նրանք իրենց բոլորո-

վին ազատ են զգում, որովհետև խորհրդաւորութիւնը տեսնում են նրանք միայն ձեռնարկի կատարման մէջ, ընդ որ ուժը ձեռնարկան ամբողջութեան մէջ: Մտան եկեղեցի, ծունր դրին, մոմ վառեցին, քահանայի ձայնը ընկաւ նրանց ականջը, եկեղեցու դրան նստած աղքատին մի երկու կոպէկ տուին, արդէն ամեն ինչ կատարեալ է: Հենց այդ է փրկարարը, այդքանն է կարեւոր: «Ախպէր, քու ժամից ետ մի ընկնի, քո աղօթքն արա, խուսկ ու մոմը, ողորմութիւնը ձեռքիցդ պակաս մի անիլ, Աստուած ներող է, էն մէկէլ բաներին էլ մի ճար կանի»: Ահաւասիկ գիւղացու դատողութեան սահմանը, նրա կրօնական համոզմունքի շարիը:

Եթէ ժամերգութեան և եկեղեցի յաճախելու մասին մեր ասածը ամփոփելու լինենք, կարող ենք ձեռնարկել այսպէս. գիւղացին իրօք ոպասում է մի բան ժամերգութիւնից, բայց ոչ թէ նրա օգտակար, հոգեշահ, իմաստալից բովանդակութիւնից, այլ նրա արտաքին ձևից, հենց նրանից, որ ասումք: Այս հասկացողութիւնը երբեմն անշարժ հեռու է տանում. գիւղացին դատում է. «որ ժամ ասուի լաւ կը լինի, թէ և ես անարժան եմ, չեմ գնում (այո իրեն արդարեցնելու համար է ասում և կեղծ է) բայց Տէրտէրը ասում է, իր պարտքը կատարում է, հալբաթ իմ հոգուն էլ խէր կայ դրանից»: Տարօրինակ չէ: Եւ այս այսպէս է ոչ միայն ժողովրդի համար, քահանաներն էլ այդպէս են դատում... տարաբախտաբար հոգեւոր իշխանութեան քարծրաստիճան ներկայացուցիչներին շատերի համար էլ ժամատացութիւնը մի ձեռնարկ, խորհրդաւոր գործողութիւն է, որտեղ էական է ոչ թէ ըովանդակութիւնը, այլ եղանակը, արտաքին շուքը և ուրիշ պարագաներ, որտեղ անհրաժեշտ է ոչ թէ աղօթողի տրամադրութիւն, այլ աղօթքի շարիած խօսքեր, որը ոչ թէ համոզում է լսողին, այլ խորհրդաւոր կերպով ազդում է նրա վերայ. ուստի որի ըովանդակութեան համեմատ ոչ թէ անհրաժեշտ է լինել, կերպարանափոխուել, այլ միայն լսել, կրկնել, կամ հենց նոյն իսկ իմանալ որ ասում է:

Եկեղեցական միւս խորհուրդների մասին յետոյ:

#### Սմբա՝ Բ. Սարգսեան

1908 թ. 13 յունիսի, Մեծ Շահրիար:

